ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## 16 հունիս 2026 թվականի թիվ 64-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 9-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 16-Ի ԹԻՎ 9 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և 17-րդ հոդվածի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 9-րդ նստաշրջանի 2026 թվականի հունիսի 16-ի թիվ 9 արտահերթ նիստի օրակարգը.

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու, անհատական կազմը հաստատելու մասին.

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 155-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

3) Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխելու մասին.

4) Հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու մասին.

5) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը անհատույց օտարելու մասին.

6) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2026 թվականի մայիսի 08-ի N55-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին.

7) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի մասհանումների ծախսման 2026 թվականի ծրագիրը հաստատելու մասին:

8) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 14-ի N 68 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

9) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը առանց մրցույթի կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՀԱՐ

ԳԱԼՍՏՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԲԱԲԱՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ · РА КОТАЙКСКАЯ ОБЛАСТЬ МУНИЦИПАЛИТЕТ ЦАХКАДЗОР · RA KOTAYK REGION TSAGHKADZOR MUNICIPALITY · 03027029

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հունիս 2026 թվականի թիվ 65-Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի, 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 02-ի N 631-Ն որոշման հավելվածի, 12-րդ կետը

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավարին կից ստեղծել Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմ՝ 6 անդամից:
2. Հաստատել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ
ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՀԱՐ
ԳԱԼՍՏՅԱՆ ՀԱՍՄԻԿ
ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԲԱԲԱՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ
ՄԵԼՈՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված

ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու
2026 թվականի հունիսի 16 –ի N 65-Ա որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

| Հ/Հ | հանձնաժողով | Ազգանուն,անուն | պաշտոնը |
|---|---|---|---|
| 1 | նախագահ | Մանուկյան Ռիմա | աշխատակազմի իրավաբանական, քարտուղարության, անձնակազմի կառավարման բաժնի պետ |
| 2 | անդամ | Ալոյան Սամվել | աշխատակազմի իրավաբանական, քարտուղարության, անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ |
| | անդամ | Ղազարյան Մարգարիտ | աշխատակազմի իրավաբանական, քարտուղարության, անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ /սոցիալական աշխատող/ |
| 3 | անդամ | Հասմիկ Պետրոսյան | աշխատակազմի գլխավոր մասնագետ |
| 4 | անդամ | Իսրայելյան Մանյա | «Ծաղկաձոր քաղաքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հոգեբան |
| 5 | անդամ | Կարեն Բաղրամյան | Ավագանու անդամ |
| 6 | անդամ | Ռոման Հարությունյան | ՀՀ ոստիկանության Հրազդանի բաժնի անչափահասների և ընտանեկան բռնության կանխարգելման գործերով տեսուչ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## 16 հունիս 2026 թվականի թիվ 66-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 155-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 155-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Բաժին 1 խումբ 1 դաս 1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում) հոդված «4212» (Էներգետիկ ծառայություններ) «9500,0» թիվը փոխարինել «11500,0» թվով:
2) Բաժին 1 խումբ 1 դաս 1 (Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում) հոդված «4235» (Կառավարչական ծառայություններ) «3000,0» թիվը փոխարինել «4000,0» թվով:
3) Բաժին 3 խումբ 2 դաս 1 (Փրկարար ծառայություն) հոդված «4511» (Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին) «0,0» թիվը փոխարինել «16564,3» թվով:
4) Բաժին 4 խումբ 5 դաս 1 (ճանապարհային տրանսպորտ) հոդված «4251» (Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում) «5000,0» թիվը փոխարինել «11000,0» թվով:
5) Բաժին 6 խումբ 3 դաս 1 (Ջրամատակարարում) հոդված «5112» (Շենքերի և շինությունների կառուցում) «421198,3» թիվը փոխարինել «361198,3» թվով:
6) Բաժին 6 խումբ 4 դաս 1 (Փողոցների լուսավորում) հոդված «5113» (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) «70000,0» թիվը փոխարինել «130000,0»

թվով:
7) Բաժին 8 խումբ 2 դաս 4 (Այլ մշակութային կազմակերպություններ) հոդված «4216» (Գույքի և սարքավորումների վարձակալություն) «15000,0» թիվը փոխարինել «1000,0» թվով:
8) Բաժին 8 խումբ 2 դաս 4 (Այլ մշակութային կազմակերպություններ) հոդված «4234» (Տեղեկատվական ծառայություններ) «5000,0» թիվը փոխարինել «10000,0» թվով:
9) Բաժին 8 խումբ 2 դաս 4 (Այլ մշակութային կազմակերպություններ) հոդված «4239» (Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) «40000,0» թիվը փոխարինել «45000,0» թվով:
10) Բաժին 11 խումբ 1 դաս 2 (ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ) հոդված «4891» (Պահուստային միջոցներ) «267028.8» թիվը փոխարինել « 245464,5 » թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՀԱՐ

ԳԱԼՍՏՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ.

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԲԱԲԱՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## 16 հունիս 2026 թվականի թիվ 67-Ա

### ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 7-րդ և 10-րդ հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 54-րդ և 60-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2026 թվականի մայիսի 7-ի N 1/փ-194 եզրակացությունը
և «ԻՆՏՐԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արտակ Աշոտի Հայոցյանի դիմումը

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՛

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, ք. Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների փողոց թիվ 21 հասցեում գտնվող, « ԻՆՏՐԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 0,18 հա (կադաստրային ծածկագիր՝ 07-005-0025-0086) հատուկ պահպանվող տարածքների, հանգստի համար նախատեսված՝ նպատակային և գործառնական նշանակության հողամասը փոփոխել բնակավայրերի, հասարակական կառուցապատման նպատակային և գործառնական նշանակության հողամասի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՀԱՐ

ԳԱԼՍՏՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԲԱԲԱՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## 16 հունիս 2026 թվականի թիվ 68-Ա

### ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի7-րդ և10-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 54-րդ և 60-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի կողմից Կոտայքի մարզպետին 2026 թվականի ապրիլի 14-ին ներկայացված N01/03.1/03186-202 գրությունը

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «ԼԵԳԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի,Ծաղկաձոր քաղաքի Սարալանջի 1-ին փողոց, N 1/60, հասցում գտնվող 0,040495 հա, (կադաստրային ծածկագիր՝ 07-005-0023-0310), Սարալանջի 1-ին փողոց, N 1/61, հասցում գտնվող 0,040757 հա, (կադաստրային ծածկագիր՝ 07-005-0023-0308), Սարալանջի 1-ին փողոց, N 1/62 հասցում, 0,040757 հա, (կադաստրային ծածկագիր՝ 07-005-0023-0309 ) և Սարալանջի 1-ին փողոց, N 1/63 հասցեում գտնվող 0,040142 հա, (կադաստրային ծածկագիր՝ 07-005-0023-0311), մակերեսով հողամասի բնակավայրերի հասարակականից փոփոխել բնակավայրերի, բնակելի կառուցապատման :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -1

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՀԱՐ

ԳԱԼՍՏՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԲԱԲԱՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

---

## 16 հունիս 2026 թվականի թիվ 69-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և Հերմինե Վահանի Ղարիբյանի դիմումը

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի, Մեղրաձոր գյուղի 3-րդ փողոցի, 68/2 շենքի, 20 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակարանը անհատույց օտարել Հերմինե Վահանի Ղարիբյանին (ծնված 16.12.1973թ., անձնագիր՝ AL0315697, տրված 29.03.2023թ., 049 կողմից):
2. Համասեփականատեր ճանաչել Ալբերտ Սիրեկանի Ղարիբյանին (ծնված 09.06.1970թ., ՆՔ 018720870, տրված 22.06.2025թ. , 049-ի կողմից):
3.Շենքի կառուցման (սպասարկման) նպատակով տրամադրված հողամասի և շենքի ընդհանուր օգտագործման տարածքի նկատմամբ սեփականատերը ունի համապատասխան բաժնեմասի սեփականության իրավունք:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՀԱՐ

ԳԱԼՍՏՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԲԱԲԱՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## 16 հունիս 2026 թվականի թիվ 70-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 08-Ի N55-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2026 թվականի մայիսի 08-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2026 թվականի մարտի 10-ի N 31-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N55-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.
1) որոշման՝ 1-ին կետում գրված «Ծաղկաձոր համայնքի ավագանու» բառերից հետո լրացնել «2026 թվականի մարտի 10-ի» բառերը և թվերը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՀԱՐ

ԳԱԼՍՏՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԲԱԲԱՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հունիս 2026 թվականի թիվ 71-Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 1-ի N 1358-Ն որոշման հավելվածի 2-րդ կետը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալի 2026 թվականի մայիսի 12-ի N ԱՎ/ /17012-2026 գրությունը.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի մասհանումների ծախսման 2026 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՀԱՐ

ԳԱԼՍՏՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԲԱԲԱՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
КОТАЙКСКАЯ ОБЛАСТЬ МУНИЦИПАЛИТЕТ ЦАХКАДЗОР
RA KOTAYK REGION TSAGHKADZOR MUNICIPALITY
03027029

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու
2026 թվականի հունիսի 16-ի թիվ 71-Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանումը** | Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր բնակավայրի 6-րդ փողոցի հիմնանորոգման աշխատանքներ |
| **Մարզ** | Կոտայք |
| **Համայնքը /բնակավայրը** | Համայնք՝ Ծաղկաձոր, բնակավայր՝ Մեղրաձոր |
| **Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից** | Մայրաքաղաքից՝ Ծաղկաձոր համայնք 57կմ,<br>Մեղրաձոր բնակավայր՝ 66կմ, |
| **Համայնքի /բնակավայրի բնակչությունը** | Համայնքի՝ 8093 մարդ,<br><br>Մեղրաձոր բնակավայրի բնակչության թիվը՝ 2902 մարդ |
| **Սահմանամերձ համայնք/բնակավայր** | - |
| **Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը** | Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր բնակավայրը հանդիսանում է ռոյալթի վճարած կազմակերպությունների, մասնավորապես «Մեղրաձոր գոլդ» Սահմանափակ պատասխանատվության ընկերության ազդակիր բնակավայր:<br>Ծրագիրը նախատեսվում համայնքային նշանակության ճանապարհահատվածի հիմնանորոգում և բարեկարգում՝ ընդհանուր 1500 մետր երկարությամբ և 6 մետր լայնությամբ: Նախատեսվում է իրականացնել ճանապարհի ամբողջական վերականգնում՝ներառյալ հողային աշխատանքներ ,հիմքի ամրացում,ասֆալտապատում,ինչպես նաև անհրաժեշտ ինժեներական ենթակառուցվածքների բարելավում:<br>Ծրագրի իրականացումը միտված է ապահովելու անվտանգ,հարմարավետ և տարվա բոլոր եղանակներին անցանելի ճանապարհային միջավայր՝նպաստելով բնակավայրի ներհամայնքային և միջհամայնքային կապերի զարգացմանը:<br><br>**Ծրագրի իրականացման անհրաժեշտություն**<br><br>Նշված ճանապարհահատվածը ներկայումս գտնվում է ոչ բավարար վիճակում և ունի բարձր ծանրաբեռնվածություն, ինչը զգալիորեն դժվարացնում է տրանսպորտային տեղաշարժը, հատկապես վատ եղանակային պայմաններում :Ճանապարհի մաշվածությունը,անհարթությունները և չասֆալտապատված հատվածները հանգեցնում են նրան, որ մեքենաների ինտենսիվ շարժի հետևանքով առաջացնում է մեծ քանակությամբ փոշի:<br>Փոշու առկայությունը բացասաբար է անդրադառնում բնակիչների կենսապայմանների վրա՝առաջացնելով անհարմարություններ և առողջապահական խնդիրների ռիսկեր,ինչի արդյունքում համայնքապետարան պարբերաբար ստացվում են բնակիչների բողոքներ:<br>Ծրագրի իրականացումը անհրաժեշտ է՝<br>• Ապահովելու բնակչության անվտանգ և անխափան տեղաշարժը,<br>• Նվազեցնելու փոշու մակարդակը և բարելավելու բնակիչների |

| | |
|---|---|
| | կենսապայմանները,<br>• Բարելավելու համայնքի հասանելիությունը,<br>• Խթանելու զբոսաշրջության և տեղական բիզնեսի զարգացումը,<br>• Բարձրացնելու համայնքի ընդհանուր կենսամակարդակը և գրավչությունը ներդրողների համար:<br>Ճանապարհի բարելավումը հանդիսանում է համայնքի կայուն զարգացման կարևոր նախապայման և կունենա երկարաժամկետ սոցիալ-տնտեսական և շրջակա միջավայրի վրա դրական ազդեցություն:<br><br>Նախագծանախահաշվային փասթաթղերը դեռևս առկա չեն,բայց նախնական ուսումնասիրությունների համաձայն ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է ≈ 86 263 000ՀՀ դրամ որից՝ 30 000 000 ՀՀ դրամ և նախագծանախահաշվային փասթաթղերը≈4400 000,հեղինակային հսկողությունը ≈120000 ՀՀ դրամ , փորձաքննության ձեռքբերումը≈253000 ՀՀ դրամ հատկացնում է «Մեղրաձոր գոլդ» Սահմանափակ պատասխանատվության ընկերությունը:<br>Ծրագիրը ներառված է համայնքի 2022-2026թթ հնգամյա զարգացման ծրագրում, որի հաստատման ընթացքում անցել է հանրային քննարկում :Ծրագրով նախատեսված ուղղությունը համապատասխանում է ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 1-ի N 1370-Ն որոշմամբ հաստատված պահանջներին, մասնավորապես՝<br>1-ին կետի 8-րդ ենթակետի՝ «տրանսպորտ և ճանապարհաշինություն» ուղղությանը<br><br>2-րդ կետի 6-րդ ենթակետի՝ «Ճանապարհաշինական և տրանսպորտային նշանակության ծրագրեր» պարբերություններին՝<br><br>ա) Համայնքային նշանակության ճանապարհների կառուցում և վերանորոգում<br>•<br>ե) Համայնքային ճանապարհների կահավորում |
| Ծրագրի ակնկալվող արդյունքները<br><br>Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա | *- Հիմնական շահառուների քանակը- 2902 բնակիչ*<br><br>*Ծրագրի շահառու են հանդիսանում Մեղրաձոր բնակավայրի բնակիչները :* |
| Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները | *Նախատեսվում է՝*<br>*1. կազմել նախագծանախահաշվային փասփաթղթերը*<br>*2. անցկացնել նախագծանախահաշվային փասփաթղթերի փորձաքննություն*<br>*3. փրամադրել ՃՀԱ,* |

| | |
|---|---|
| | 4. կազմակերպել գնման ընթացակարգ<br>5. ընտրել այն պատասխանատու կազմակերպությանը, որն ունի ծրագրով նախատեսված գործունեության համար պահանջվող արտոնագիր և կիրականացնի տվյալ աշխատանքները նշված որակով ու ժամկետներում:<br>6. Տեխնիկական հսկողության ծառայություններ մատուցող ընկերության հետ պայմանագրի կնքում:<br>7. Հեղինակային հսկողության ծառայությունների համար պայմանագրի կնքում:<br>8. Շինարարության թույլտվության տրամադրում:<br>9. Շինարարության ընթացքում շինարարական ծառայությունների մատուցման աշխատանքների որակի և ծավալի հետևում:<br>10. Ծրագրի վերջնական արդյունքի ընդունում և վճարում: |
| **Ծրագրի իրականացման տևողությունը** | Սկիզբը՝ ըստ պայմանագրի<br><br>Տևողությունը՝ 9 ամիս<br><br>Ծրագրի ավարտից հետո, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի օգոստոսի 4-ի N 1198-Ն որոշման Հավելված N 1-ի 2-րդ կետով սահմանված ժամկետներում կներկայացվի ծրագրի տարեկան հաշվետվությունը: |
| **Ծրագրի հնարավոր ռիսկերը** | Վերոնշյալ ծրագրի ռիսկ կարող են լինել ֆորսմաժորային իրավիճակները, երբ անհաղթահարելի ուժի ազդեցությամբ հնարավոր չի լինի իրականացնել ծրագիրը:<br><br>Ծրագրի իրականացման ընթացքում կարող են առաջանալ հետևյալ ռիսկերը.<br><br>• Անբարենպաստ եղանակային պայմաններ (անձրև, ձյուն), որոնք կարող են դանդաղեցնել շինարարական աշխատանքները,<br>• Շինանյութերի գների աճ կամ մատակարարման ուշացում,<br>• Ֆինանսական ռիսկեր՝ ծրագրի բյուջեի անբավարարություն կամ լրացուցիչ չնախատեսված ծախսերի առաջացում<br>• Տեխնիկական խնդիրներ (շինարարական տեխնիկայի խափանումներ),<br>• Կապալառու կազմակերպության կողմից աշխատանքների ուշացում կամ ոչ պատշաճ իրականացում,<br>• Երթևեկության ժամանակավոր սահմանափակումներ,<br>• Փոշու և աղմուկի առաջացում, ինչը կարող է առաջացնել բնակիչների դժգոհություն:<br><br>Ռիսկերի ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսվում են հետևյալ միջոցառումները.<br><br>• Աշխատանքների պլանավորում՝ հաշվի առնելով եղանակային պայմանները,<br>• Նախապես շինանյութերի մատակարարման պայմանագրերի կնքում և գների ֆիքսում հնարավորության դեպքում,<br>• Ֆինանսական պլանավորման ճշգրտում և պահուստային միջոցների նախատեսում չնախատեսված ծախսերը ծածկելու համար,<br>• Պահուստային տեխնիկայի ներգրավման ապահովում տեխնիկական խնդիրների դեպքում,<br>• Կապալառուի նկատմամբ հստակ վերահսկողության իրականացում և պայմանագրային պարտավորությունների խիստ պահպանում,<br>• Երթևեկության ժամանակավոր կազմակերպման սխեմաների մշակում՝ |

| | |
|---|---|
| | *բնակիչների անհարմարությունները նվազեցնելու համար,*<br>• *Փոշու նվազեցման միջոցառումների իրականացում (ջրցանում),*<br>• *Բնակիչների իրազեկում իրականացվող աշխատանքների վերաբերյալ:* |

---

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

*(անունը, ազգանունը)*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

| Հ/Հ | Միջոցառման անվանումը | Ծրագրի արժեքը Ընդհամենը/ՀՀ.դրամ/ | Պետական բյուջեից համայնքային մասհանումներ /ՀՀ դրամ/ | Մեղրաձոր գյուղ ՍՊԸ-ի ֆինանսական միջոցներով |
|---|---|---|---|---|
| 1 | Ընդամենը | **86 263 000** | **51 490 000** | 34 773 000 |
| 1.1 | Նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերում | 4 400 000 | - | 4 400 000 |
| 1.2 | Շինարարական աշխատանքներ,գոյքի ձեռքբերում | **78 248 000** | **48 248 000** | **30 000 000** |
| 1.3 | Հեղինակային հսկողություն | **120 000** | | **120 000** |
| 1.4 | Տեխնիկական հսկողություն | **242 000** | **242 000** | **-** |
| 1.5 | Փորձաքննության ձեռքբերում | **253 000** | | **253 000** |
| 1.6 | Չնախատեսված ծախսեր | **3,000,000** | **3,000,000** | **-** |

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ

**Ծրագրի անվանումը**

Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր բնակավայրի 6-րդ փողոցի հիմնանորոգման աշխատանքներ

**Ծրագրի հիմնավորման անհրաժեշտությունը**

Մեղրաձոր բնակավայրը հանդիսանում է ռոյալթի վճարած կազմակերպությունների, մասնավորապես՝ «Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ-ի ազդակիր բնակավայր: Ներկայացված ճանապարհահատվածը հանդիսանում է համայնքի կարևոր ենթակառուցվածքներից մեկը:Այն ունի շուրջ 1500 մետր երկարություն և 6 մետր լայնություն,սակայն ներկայումս գտնվում է ոչ բավարար տեխնիկական վիճակում:Ճանապարհը շահագործվում է երկար տարիներ և ենթարկվել է զգալի մաշվածության:Տարիների ընթացքում այն չի ենթարկվել հիմնանորոգման,ինչի արդյունքում ծածկույթը վնասված է,առկա են անհարթություններ,փոսեր և քայքայված հատվածներ:Հատկապես անձրևային և ձնհալ եղանակներին ճանապարհը դառնում է դժվարանցանելի:Միաժամանակ ճանապարհը ունի բարձր ծանրաբեռնվածություն,և մեքենաների ինտենսիվ երթևեկության հետևանքով առաջանում է մեծ քանակությամբ փոշի,որը տարածվում է հարակից բնակելի տարածքների վրա:Սա առաջացնում է բնակիչների բողոքներ և բացասաբար է անդրադառնում նրանց կենսապայմանների և առողջության վրա :

Ծրագրի իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

- **Տրանսպորտային խնդիրներ** – ճանապարհի վատ վիճակը խոչընդոտում է բնակիչների և տրանսպորտային միջոցների անվտանգ տեղաշարժը,
- **Փոշու առաջացում** – ինտենսիվ երթևեկության հետևանքով առաջացող փոշին վատթարացնում է շրջակա միջավայրը և բնակիչների կյանքի որակը,
- **Անվտանգության ռիսկեր** – ճանապարհի անհարթությունները մեծացնում են վթարների հավանականությունը,
- **Տնտեսական ազդեցություն** – վատ ճանապարհային պայմանները խոչընդոտում են բիզնեսի և ծառայությունների զարգացմանը,

- **Սոցիալական ազդեցություն** – բնակիչների կողմից պարբերաբար ներկայացվում են բողոքներ, ինչը վկայում է խնդրի հրատապության մասին:

Վերոնշյալ խնդիրները վտանգ են ներկայացնում բնակիչների առողջության և անվտանգության համար, ինչպես նաև խոչընդոտում են Մեղրաձոր բնակավայրի զարգացմանը:

**Ծրագրի համապատասխանությունը պետական ռազմավարություններին**

Ծրագիրն ուղղակիորեն համահունչ է **ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 1-ի N 1370-Ն որոշմամբ հաստատված** պահանջներին, մասնավորապես՝

**1-ին կետի 8-րդ ենթակետի**՝ «տրանսպորտ և ճանապարհաշինություն» ուղղությանը

**2-րդ կետի 6-րդ ենթակետի**՝ «Ճանապարհաշինական և տրանսպորտային նշանակության ծրագրեր» պարբերություններին՝

ա) Համայնքային նշանակության ճանապարհների կառուցում և բարեկարգում

ե) Համայնքային ճանապարհների կահավորում

Այս ծրագիրը ներառված է նաև համայնքի **2022-2026 թթ. հնգամյա զարգացման ծրագրում**, որտեղ հանրային քննարկումների արդյունքում ճանաչվել է որպես առաջնահերթություն:

Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա ապահովել անվտանգ, հարմարավետ և որակյալ ճանապարհային միջավայր, նվազեցնել փոշու մակարդակը, բարելավել բնակիչների կենսապայմանները և նպաստել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

**Աշխատակազմի քարտուղար՝** **Գարիկ Բադալյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
# Ո Ր Ո Շ Ու Մ

## 16 հունիս 2026 թվականի թիվ 72-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի N 68 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 14-ի «Համայնքի սեփականություն համարվող հողամասերը մրցութային կարգով օգտագործման տրամադրելու համար մրցույթային հանձնաժողով ստեղծելու մասին» N 68 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշման 2-րդ կետում գրված « Արձանագրող՝ Արա Մեսրոպյան /Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ/» բառերը փոխարինել « Արձանագրող՝ Հայկ Բաբայան /Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ /» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՀԱՐ

ԳԱԼՍՏՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԲԱԲԱՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ու Մ

## 16 հունիս 2026 թվականի թիվ 73-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Հողային օրենսգրքի 48. 1 -րդ և 76-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 46.2 կետի,ա) ենթակետով և հիմք ընդունելով «Վիվա Արմենիա » փակ բաժնետիրական ընկերության լիազոր ներկայացուցիչ՝ Ռոբերտ Իգորի Սվաջյանի դիմումը

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1 «Վիվա Արմենիա » փակ բաժնետիրական ընկերությանը առանց մրցույթի կառուցապատման իրավունքով 10 / տաս/ տարի ժամկետով օգտագործման տրամադրել համայնքային սեփականություն հանդիսացող, Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր Սարալանջի փողոց 41/2 հասցեում գտնվող, հատուկ պահպանվող տարածքների, հանգստի համար նախատեսված 0,002 հա ( կադաստրային ծածկագիր՝ 07-005-0023-0425) մակերեսով հողամասը, ամսեկան վարձաչափը 50 000 ( հիսուն հազար ) Հայաստանի Հանրապետության դրամ, շարժական բջջային կայան տեղադրելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՈՀԱՐ

ԳԱԼՍՏՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԲԱԲԱՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՈՒՆԻԿ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ